



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ  
ՏԱԹԵՎ Մ/Ճ**

ՀՀ, ք.Կապան, Գործարանային 17, հեռ. 060-71-15-20

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ  
Ինքնավար էներգաարտադրող-բաշխող կայանը սպառողի սպառման  
համակարգին միացնելու համար**

«11» «06» 2026թ.  
«S-600-0,4/1900»

**Սպառող/ենթասպառող:** ՀՀ ՆԳՆ ՍԻՍԻԱՆԻ ՀՓՋ  
**Օբյեկտի գտնվելու վայրը:** ք. Սիսիան, Իսրայելյան փող., 6  
**Տեխնիկական պայմանների տրամադրման նպատակը:**

- 1) Ինքնավար էներգաարտադրող-բաշխող կայանի միացում սպառման համակարգին   
2) Ինքնավար էներգաարտադրող-բաշխող կայանի հզորության ավելացում կամ նվազում նախկինում տրված տեխնիկական բնութագրերում նշված հզորությունից.

3) Ինքնավար էներգաարտադրող-բաշխող կայանի միացման սխեմայի փոփոխություն


**Կայանի պահանջվող հզորությունը:** 5 կՎտ

**Լարման մակարդակը:** 0,22 կՎ

**Ենթասպառողների առկայությունը:** առկա չէ

**Կայանի տեսակը (միաֆազ, եռաֆազ):** միաֆազ

1. Հաշվառման քարտը: 0377282
2. Սպառման համակարգի սնման աղբյուրը: ՏԵ 4298-ի 0,4 կՎ ՕԳ-ի թիվ 11 հենասյուն
3. Էլ.ցանցին միացման պատվեր: \_\_\_\_\_
4. Ինքնավար էներգաարտադրող-բաշխող կայանի միացման կետը: սպառողի ց/լ վահան
5. Կայանի տեսակը: Արևային ֆոտովոլտային
6. Պահուստային սնուցման աղբյուր: առկա չէ
7. Դիմումատուի կողմից իրականացվող աշխատանքները.
  - 7.1. Տեղադրել համապատասխան հզորության փոխակերպիչ/ինվերտոր/:
  - 7.2. Փոխակերպիչները իրենց ցանցային որակական հատկանիշներով պետք է համապատասխանեն ԳՕՍՏ 32144 պահանջներին:
  - 7.3. Կայանի միացումը պետք է իրականացվի սույն տեխնիկական բնութագրի 4-րդ կետով որոշված միացման կետից՝ 0,22 կՎ լարման էլեկտրահաղորդման գծի միջոցով /կտրվածքը, երկարությունը և էլեկտրահաղորդման գծի տիպը իրականացնել նախագծով/:
  - 7.4. Միացման կետում տեղադրել ավտոմատ անջատիչ՝ 32 Ա անվանական հոսանքով:
  - 7.5. 0,22 կՎ լարման հաղորդման գծի անցկացման ուղեգիծը, սխեման և եղանակը պետք է համաձայնեցվի ՀԷՏ ՓԲ ընկերության համապատասխան շահագործման շրջանի պետի կամ մասնաճյուղի գլխավոր ինժեներների և համապատասխան շահագրգիռ կազմակերպությունների հետ:
  - 7.6. Նախատեսել հողանցման կոնտոր բոլոր մետաղական մասերը հողանցել և ապահովել 4 օհմ դիմադրություն:
  - 7.7. Նախատեսել պաշտպանություն (ավտոմատիկա), որը ցանցի լարման բացակայության ժամանակ կապահովի հակադարձ լարման բացակայությունը դեպի բաշխման ցանց:



- 7.8. Կայանի միացման էլեկտրական մասի շինարարական աշխատանքները իրականացնել համաձայն էլեկտրակայանների, ցանցերի և սպառողների տեխնիկական շահագործման կանոնների:
- 7.9. Կայանի շինարարությունը իրականացնել լիցենզավորված կազմակերպության միջոցով՝ համաձայն ՀՀ կառավարության 30 նոյեմբերի 2023 թվականի N 2106-Ն որոշման:
- 7.10. Էլեկտրական էներգիայի հաշվառումը իրականացնել Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոններին համապատասխան՝ հաշվառքի սարքերը փոխարինելով դարձափոխիչային բազմասակագնային էլեկտրոնային հաշվիչով:
- 7.11. Անհրաժեշտ է ՀԾԿՀ-ի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N 523-Ն որոշման կանոնների 257 կետի 3-րդ ենթակետով սահմանված կարգով վճարել № **2474663158160270** հաշվի համարին կանխավճար:
- 7.12. Սպառման համակարգի տեխնիկական պարամետրերի (լարման մակարդակ, հզորության նվազեցում, էլ. սնման կետ) փոփոխման դեպքում սույն կայանի միացման ՏՊ-ը կհամարվի անվավեր կամ համապատասխան հզորության չափով նվազեցում կկատարվի միացված արևային կայանի հզորությունից:
- 7.13. Այն դեպքերում, երբ կայանը հանդիսանում է միացման կետում լարման արժեքների շեղման պատճառ՝ ԳՕՍՍ 32144 սահմանված երկարատև թույլատրելի տիրույթից դուրս, որտեղ մինչև միացումը լարման արժեքները գտնվում էին ԳՕՍՍ 32144 սահմանված երկարատև թույլատրելի տիրույթում, անհրաժեշտ է սահմանափակել կայանի լարման աշխատանքային տիրույթը՝ համապատասխանեցնելով լարման որակի ԳՕՍՍ-ով սահմանված երկարատև թույլատրելի լարման աշխատանքային տիրույթին, հակառակ դեպքում կայանը ենթակա է անջատման բաշխման ցանցից:
- 7.14. Շին-մոնտաժային աշխատանքներ իրականացնել լիցենզավորված կազմակերպության կողմից էլեկտրատեղակայման կանոններին և կարգավորող տեխնիկական փաստաթղթերին համապատասխան:
- 7.15. Ենթասպառող լինելու դեպքում անհրաժեշտ է ներկայացնել սպառողի համաձայնագիրը:
- 7.16. Նախքան կայանի միացնելը՝ հաշվառքի սարքերը փոխարինել դարձափոխիչային, «ՀԷՑ» ՓԲ ընկերության ներկայացուցչի հետ միասին փորձարկել համակարգը՝ կազմելով համապատասխան արձանագրություն, և Ընկերությանը տրամադրել կատարված աշխատանքների ակտերը, էլեկտրասարքավորումների փորձարկման արձանագրությունները՝ և տեղադրող ընկերության լիցենզիաները:
- 7.17. Միացումը կիրականացվի «ՀԷՑ» ՓԲ ընկերության համապատասխան շահագործման շրջանի պետի կամ մասնաճյուղի գլխավոր ճարտարագետի կողմից տրված լարման կարգադրության և էլ. էներգիայի մատակարարման և հատուցման (հնքնավար էներգաարտադրող-բաշխող) պայմանագրի առկայության դեպքում:
- 7.18. Տեխնիկական պայմանների կատարման ժամկետը 1(մեկ) տարի է, եթե ԷՄԱ և ԷԲՑ կանոններով սահմանված փոփոխություններ ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը չի նախատեսում:

«ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից «ՀԱՄԱՁԱՅՆՎԱԾ»

«Տաթև» մ/ճ-ի գլխավոր ճարտարագետ **Գ. Ստեփանյան**



(ստորագրություն, կնիք)